

ԱՆՏԻԻՔ ԽԻՄՈՒԹՅԱՆ

ԴԱՐՁՅԱԼ ՄՈՌԱԳՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԽԱՉԱՏՈՒՐ ԷՂՐԱՄՃՅԱՆՑԻ
ՄԱՍԻՆ՝

«Մի սոռացված հայ բանաստեղծ» վերնագրով 1910 թվին ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Տեղեկագրի № 4—5-ում (73—80 էջ) պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը լույս է ընծայել ցարական ցենզուրայի կողմից լուսթյան մատնված Քաչատուր Հրամսյանցի երկերի ժողովածուի I մասի ձեռագրատետրի (որը գտնվում է Թբիլիսիի՝ Ստալինի անվան Պետհամալսարանի գրադարանում) մասին մի հաղորդագրություն։ Վերջերս Կովկասյան ն. ցենզուրային կոմիտեի արխիվում հայտաբերվեց վերոհիշյալ ճեղհնակի (Քաչատուր Հրամսյանցի կամ Ալըգ Իսայի) երկերի ձեռագրատետրի I մասը (ֆոնդ № 114, գործ № 930)։

Այս ձեռագրատետրի շապկի վրա գրված է.

Շարունակութիւն «Գարենի սրնգին»

11

Քաղաքում էր լճանց

Տակը սի ալլ ձեռքով կարմիր մատիտով վրացերեն ավելացրած է
1888 թվական (թվին)

Ձեռագրատետրը գովթարի ծավալ ունի, բաղկացած է 21 թերթից և պարունակում է 54 երգ, որոնք բոլորն էլ համարակալված են և սկսվում են № 65-ից, այսինքն շարունակությունն են հանդիսանում 64 երգ պարունակող «Կարենի սրինգը» ձեռագրատետրի Ա. մասի, որի մասին վերևում ասացինք:

Մեր ձեռքի տակ գտնված ձեռագրատետրի մեջ տեղավորված 54 երգից 10 երգը ամբողջովին ջնջված է կարմիր թանաքով և կարմիր մատիտով (ըստ երևույթին, թանաքով ջնջել է գրաքննիչ Կարախանովը, որովհետև նրա մականգրությունը ձեռագրատետրի վերջին թերթի վրա կարմիր թանաքով է կատարված, իսկ կարմիր մատիտով ջնջել է մի այլ անձնավորություն, որը ձեռագրատետրի շապկի վրա խոշոր առոներով գրել է 1888 թվին), իսկ մեկ երգից ջնջված են կտորներ (սիրանիս և 80, 92—94)։

Հիռպիւն ջնջված են հետեյալ երգերը.

1. «Տաճար» № 79, 16 տուն, 64 տող, էջ 90.

2. «Զտեսար» № 81, ա. Վաս, 3 տռւն, 12 տող, էջ 95.

3. № 82, ր. մաս, 3 տուն, 12 տող, էջ 95.

1. Զեկուցված է թրեյդերի՝ Սաալիեի աշխատանքի մասին. Համալսարանի նախագահության
աշխատանքի նիստերի 1916 թ. փետրվարի 23-ին և նույն Համալսարանի աշխատանքի
դիտարկման նստիցանի՝ ապրիլի 27-ին:

4. «Զտեսար» № 83, գ. ժառ. 3 տուն, 12 տող, էջ 96.
 5. » № 84, գ. ժառ. 3 տուն, 12 տող, էջ 96.
 6. «Հանկ-Քեմուրն ի Մուշ» № 88, 10 տուն, 32 տող, էջ 98—99.
 7. «Ֆելեկ» № 94, 3 տուն, 12 տող, էջ 102.
 8. «Ժխոյներն ի Պայազետ» № 107, 10 տուն, 32 տող, էջ 109—110.
 9. «Տուպեյիթ» № 108, 4 տուն, 16 տող, էջ 110.
 10. «Նոր գինվոր» (Հավալար պուլատլանդի» եղանակով) № 118, 9 տուն, 36 տող, երկուական տող կրկնաթյունով. էջ 116.
- Գրվածքի վերջին էջի վրա 1888 թվին մակագրված է ուսուցիչ լեզվով (կարժիր թանաքով)։

Дозволено Цензурою. Тифлис, 1-го июля
1888 г. с исключениями
Младший цензор: Григ. Караханов.

Չնայած այս թույլատվությանը, Աշրգ-Ինայիի ձեռագրատետրը բախտ
չի ունեցել հրատարակվելու։

1890 թվին նույն այս ձեռագրատետրի շապկի 2-րդ էջի վրա մակա-
գրված է սև թանաքով հետևյալը։

По журналу цензурного комитета 12-го сентября [18]90 г. опре-
делено: в виду 22 и 106 ст. Уст. Ценз., Изд., [18]86 г. напеча-
тание воспретить и удержать при делах комитета.

Председатель комитета К. Якимов
Секретарь Н. Мелик-Нубаров.

* *

Ծարական ցենզուրայի կողմից արգելված հեղինակը տենչում է տես-
նել հայրենիքն ազատ և լուսավորված. ուստի և կոչ է անում ծառայել
նրան, նրա առաջադիմությանը, չմնալ թեև ու թերի։

Սրտով ուխտելը լավ է,
Անկիրթ ապրելը բավ է,
Վարժինք առաջ երթալու,
Հեռանալք անպետ կավե։

Ուխտենք օգնել ընկերին,
Մնացել ենք գերի.
Ուխտենք սիրել հայրենիք,
Չմնալք ետ ու թերի։

Լինեմ մատաղ այն հողին,
Որ կարոտ է միշտ ցողին.
Չտալ դայիին ու արջին
Եվ կամ կեղծավոր գողին։

(Նոր գինվոր» Հավալար պուլատլանդի» եղանակով
№ 118, էջ 116)։

Հայ ուսմիկը հաճախ է կեղեքվել ու հալածվել արևելյան բարբարոսների կողմից։ Աշուղ-բանաստեղծը խորին վշտով ու վրդովմունքով հիշում է Լենկ-Թեմուրի արշավանքը՝ «Լանկ-Թեմուրն ի Մուշ» (№ 88, էջ 98) երգում, որ լիովին ջնջված է դրաքննիչի կողմից։ Երգը գրված է Մշո բարբառով և հայկական ֆուկյուրի մի գիղեցիկ նմուշ է համեմատական կտրևուր նյութ ներկայացնելով հայ բարբառագիտության համար։

Անունտի ֆա Լանկ-Թեմուր,
Քեստի բերի խանչալ ու թուր,
Քատուցի զու մըր խաց ու ջուր։

Վայ անիծուկ, վայ Լանկ-Թեմուր,
Դո սուրաթնի թող ծածկա մուր։

Մոն ո զոր էրթանք մըղի հավար,
Թալան արեց մալ ու տավար.
Իմալ դանենք ցորեն, ձավար։

Օլուղ-չուղ խեղճ ու տկուր
Մընք զոր տանենք զըմեն բուր.
Քաղար անդամ եկավ էտ զոր։

Անշուշտ, հեղինակը նկատի ունի ոչ միայն Լենկ-Թեմուրին, այլև «օսմանցիներին» և առհասարակ օտարերկրյա բռնակալներին։ «Ծիլոյներն ի Պայազետ» երգում (№ 107, էջ 109), որ նույնպես լիովին ջնջված է ցարական դրաքննիչի ձեռքով. բողոքում է օսմանյան օգնության ղեկ։

Օսմանյան օգնություն... ճիլոյներ հասան.
Բարբարոս քրդական... միջոց անսահման.
Պայազետի ձայներն... երկինք բարձրացան.
Տեսեք հայ աղջկան... լողա մեջ արյան.
Զկալ հայ մանուկներ... ի զուր զոհեցան։
Անգութ են ճիլոյներ... փորձելով նիզակ.
Մայրերը կ'փնտրեն... յուր յրդին միակ.
Արտերի ակոսը... լիցուցավ դիակ։

Բսկ նույն երգի վերջում կոչում է.

Զարդարանք, պաճուճանք... թողեք աշխարհին.
Հույս զրեք ու զործեք... ի սեր անճարին.
Կուցե նա այցելե... աղքատ անկարին։

Օտարերկրյա զավթիչների բարբարոսություններն ստիպում են հային բռնել պանդխտության ճանապարհը և կրել նրա «բեռը զժվար ու ծանր»։

Զեռք տուր ինձի, մայրիկ, որդիդ անճար է.
Պանդխտության բեռը զժվար ու ծանր է։

(«Կարենցի երիտասարդը», № 112, էջ 112)։

Մի այլ բանաստեղծության մեջ ինային գրում է.

Օտարի գուռը ման գալով հաց եմ ասում, ում պետքն է.
Բոլոր զոհերին զարնելով բաց եմ ասում, հիւս պետքն է.
Ծարավ, քաղցած, մերկ ու բոպիկ շատ երկրներ ման գալով,
Անողորմ մարդոց զոհերը լաց եմ ասում, հիւս պետքն է:
(«Ո՞ւմ պետքն է», № 73, էջ 87),

«Թափառական կոռնկին» բանաստեղծության մեջ (№ 117, էջ 115)
«Հիվանդ եմ, օ՛հ հիվանդ եմ» երգի եղանակով պանդուխտ հեղինակը խընդ-
բում է կոռնկին.

Անցիր այս խիտ անտառեն,
Տար համբավը անճարեն.
Տար բարևը թշվառեն,
Հերիք է սիրտս վառեն.
Ասա հազար ցավերով
Կգամ բարձր նավերով,
Թափառական անունը
Կտրեց աչքերիս քունը:
Սրտիս մեջ հազար կարոտ
Կա վզիս կարմիր նարոտ:

Օտարերկրյա բռնակալներից խուսափած հայ ժողովուրդը ընկել է
անհյուրընկալ միջավայր: Աշըգ-Ինային տառապում է նրանց անարդա-
բություններից: Նոր միջավայրում, ինչպես և «բախտախնդիր միսսիո-
նարքի» մեջ նա չի գտնում ճշմարտություն: «Ձտեսար» բանաստեղծու-
թյան մեջ (№ 83—84, էջ 96), որն ամբողջովին ֆիլված է գրաքննչի
կողմից, բանաստեղծը խարազանում է հայ բողոքականներին:

Ո՞ւմից է իմ այս գանգատը, կամ թե հրին անիծեմ.
Կացնի կոթը անտառիցն է. ծառն ասաց լ՛նչ անեմ:
Շատերն ինձ ասել են թե ինային կսիրեմ,
Հասկացել, որ շատերում ճշմարտություն չմնաց:
Ո՞վ բարերար սրտագետ Տեր, աղաչում ենք՝ հերիք է.
Կրոնակից-ազգակիցից հալածվում ենք՝ հերիք է.
Իսխտախնդիր միսսիոնարք համակրում ենք՝ հերիք է.
Մեր տերտերից թեև վատ են, բայց հովվություն չմնաց.

Մի այլ երգի մեջ.

Շապիկս պատռած, կամ՝ տունս բլած,
Դյուխս են կոտրած ու հացս խլած,
Սիրուն աներիս մեջ խոտեր կան ծլած.
Ինային անդարձան, սաղը քեռուն է:
(«Սաղը քեռունն է» № 70, էջ 85),

Մեկ ուրիշ երգի մեջ բանաստեղծը հայ ժողովրդի բերանից ողբում է.

Ամբարներս դատարկ, փորներս քաղցած.
Դուխներս բաց, սաստիկ մերկացած,
Ինային էլ չունի զգեստներ կարած...

(«Մուլլ», № 69, էջ 85)։

Հեղինակը ծաղրում է ժլատ հաշուստներին, մասնավորապես նրանց, որոնց քսակի բերանը փակ է հայրենիքի համար։

Կաշոգությունդ լավ է, քսակդ լիք.
Ինչու դու կապել ես բերանն այդպես ձիգ.
Քեզանից ինչ օգուտ ունի հայրենիք,
Կինդ էլ կարող չէ օգուտ ստանալ։

(«Մակ աչք», № 89, էջ 99)։

Ինային դուրս է եկել ժողովրդի ծոցից, իր ողջ էությամբ նվիրված է սրան և ժամանակ չունի երգելու «նարկեղ» կամ «նունուֆար».

Ռամիկ եմ ես, սիրտս ուամիկ, լեզուս ու խոսքս ուամիկ.
Անձս ուամիկ՝ անվանելին ընտրված եմ մեկ հատիկ.
Նարկեզները աղաչեցին՝ ղրկե ցողդ հանդարտիկ.
Նստել եմ ես ավերակում, չկան քրթում նունուֆար։

(«Մուխամմեզ», № 65, էջ 82)։

Բանաստեղծի երգերը լի են ինքնակենսագրական տեղեկություններով։ Վերջին հատվածից կարելի է հետևել, որ հեղինակն ունի ուամկական ծագում։ Նա եղել է որբ, մեծացել է աղքատ ու «անտեր», «անհայր, անմայր ու անսեր»։ Եղել է «մուրացկան» (№ 70, էջ 85)։ «Տուպեյիթ» բանաստեղծության մեջ (№ 108, էջ 110) նա ասում է.

Հայր չունեմ՝ ճամբաս նկատե,
Մայրիկ չունեմ՝ կյանքը մաշե։

Նույն երգից պարզվում է, որ օտարերկրյա զավթիչների բարբարոսությունները զղացել է իրեն կաշվի վրա։

Աչքս ճամբան փնացին,
Սիրտս վառեցին խարկեցին,
Տունս քանդեցին՝ գնացին.
Զթողին ինձ բուն սիրելի։

կամ՝

Դայլը մտավ մեր փարախը, լափեց գառդ, Ինայի.
Երեսուն տարվա հասակում անցել է իմ տարիքս։

(«Հասակս», № 100, էջ 104)։

Հեղինակը անճարացած բռնել է պանդխտության ճանապարհը.

Աղքատություն եկավ բաղդիս, մարավ սիրտս նոր վառված.

Եղա պանդուխտ թափառական, հարստություն չմնաց:

(«Զտեսար», № 83, էջ 96):

«Ծարավ, քաղցած, մերկ ու բոբիկ շատ երկրներ ման դալով, անողորմ մարդոց դռները լաց» է ասել («Ո՞ւմ պետքն է», № 73, էջ 87):

«Բորանի» (№ 80, էջ 92) երգի մեջ ասում է.

Տեսել եմ երկրներ անթիվ, անհամար,

Ի դուր չարչարվեցա, չունեցա մեկ ճար:

Հեղինակը առևտրական նպատակներով երկու տարի եղել է Մուշում: Խմել է Մշո «կարմիր գինին» և «Եփրատի ջուրը սառը». կերել է սշո «դառը» և «քաղցր խաղողը»: Ծանոթ է նրանց սովորություններին («Մըխտոր», № 86, էջ 97): Եղել է «Թորթում և Սպեր գավառներում», նույնիսկ ճանաչում է այնտեղի բնակիչներից ոմանց («Բորանի», ծանոթություն № 80, էջ 92):

Այլըզ-Ինայիի երգերից պարզվում է, որ նա կրել է սոսկալի տառապանքներ. չունի «փող ու համբավ» («Ծուլ», № 69, էջ 85): Նա դեռ «երիտասարդ» է, բայց իրեն զգում է «ծերացած»: «Դիվանի» բանաստեղծության մեջ (№ 102, էջ 107) խնդրում է բժշկին, որ չքննի իր ցավը, որ իր «վերքերը դսդ չեն ուզե»:

Սիրտս կոտրած, կուրծքս ջարգված, երակներս՝ անդադար.

Անկարող եմ ես պատմելու, դու լսե, բավ է բժիշկ:

Կամ՝ մի այլ տեղ.

Հասակս դեռ երիտասարդ ծերացել է ալիքս,

Բաղմանաթով մտածմունքս շատացել է տալիքս:

(«Հասակս», № 100, էջ 104):

Անցյալ դարի 70-ական թվականների հեղինակը կրել է անհամար զրկանքներ: Նրա հույսերը մնացել են «թերակատար» («Հասակս», № 100, էջ 104), և այս բոլորի դեմ նա հնարավորություն չունի բողոքելու, որովհետև ցարական բռնապետությունը «կապել է» նրա «արձակ լեզուն» («Մուխամեզ», № 65, էջ 82):

Հասարակական ու սոցիալական տառապանքների հետ միասին հեղինակը տանջվում է անարգված ու դավաճանված սիրո պատճառով: Այս տրամադրությունը կարմիր թելով անցնում է նրա բոլոր սիրային երգերում:

Սիրում եմ պատկերը ազնիվ Վարվառիս.¹

Նա է ինձ միակ ընտիր բարերար:

¹ Վարվառն անվան հիշատակությունն առիթ է տալիս կրկին անգամ հաստատելու, որ Այլըզ-Ինային—Խաչատուր Էհրամեյանցը հեղինակն է 1887 թ. Թբիլի-իում հրատարակված «Վարվառն կամ 18-րդ դարու զոհը» երկի, չմամ. պրոֆ. Մելիք-Բեկ. «Մի մոռացված հայ բանաստեղծ» (ՍՍՏՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Տեղեկագիր, 1940 թ. № 4—5, էջ 74):

Երանի ինձ ձայներ—հերիք է վառիս,
Թափառիս ու ընկնիս այդպես սարեսար:

Բայց այդ սերը նրան երջանկություն չի բերել: Շտանդատն երգում
(№ 78, էջ 89) ասում է.

Սրտիցս չի վերջանալ անմարելի սիրո բոցը,
Մինչև երկինք սյուն է կանգնել հառաչանքը և կոծը.
Պարզ էր սերդ, որ սիրեցի, բաժինս եղավ հնոցը...

Մի քիչ ներքև՝

Բաժանվեցար դու ինձանից, դժոխք լինի քո տեղը...
Խեղճ Ինայիս աղաչեցի, չնայեցիր երեսիս...

Սիրելին անարգել է նրա սերը և ճարել ուրիշին.

Սերս անարգեցիր, լույսս մարեցիր,
Ինձ թշվառ թողիր, ուրիշ ճարեցիր,
Ինայու պատանը դու որ կարեցիր,
Բոլոր աշխարհ տեսավ, ես ում բամբասեմ:

(«Գթա», № 95, էջ 102).

Իսկաճանված սերը լրացրել է նրա ամբողջության ցուցակը: Նրա
համար ամենոտ խոտ է հիմա լավ մանուշակը («Գրեցի», № 67, էջ 84):

Պարզվում է նույնպես, որ հեղինակն ունեցել է Մկրտիչ անունով
զավակ: «Մկրտիչին» երգում (№ 93, էջ 101) Մկրտիչին գովում է, նրան
անվանում է ազնիվ զավակ, սիրադ րարի. հորդորում է լինել պարկեշտ
և համեստ:

Այլ՝ Ինային տիրապետում է, բացի իրեն ժամանակակից գրական
լեզվից, նաև Մշտ քարքառին («Լանկ-Թեմուրն ի Մուշ», № 88, էջ 98—99),
Ծանոթ է նաև Ֆրանսերենին, բայց՝ ապրելով XIX դարի 70-ական թվա-
կանների հայկական իրադարձությունների եռուն շրջանում, երբ օտարերկ-
րացի «միսիոնարքը» (այսինքն կաթոլիկները) իրենց հետ բերում էին
անարգարություն, նա բնականաբար լցվում է ատելությամբ դեպի այդ
լեզուները, մասնավորապես՝ դեպի ֆրանսերենը: Հեղինակը չի ցանկանում
իր բերանը դառնացնել օտարի լեզվով: Այդ լեզուն նրա համար «կծու» է
և «թթու»: «Bone joure» բանաստեղծության մեջ (№ 75, էջ 88) իրեն հետ
ֆրանսերեն խոսող օտարերկրացի պարոնին ասում է.

Գնա, պարոն, էրթաս պարով, համ կծու ես, համ՝ թթու.

Ինայի բերանս անհամ է, քեզանով էլ ի՞նչ դառնացնեմ:

Առաջին ձեռագրատետրում հեղինակի կողմից հիշված աշխարհագրա-
կան վայրերին այս ձեռագրատետրն ավելացնում է նոր անուններ՝ Անի,
Վան (№ 79, էջ 90), Լազատան (№ 80, էջ 21), Հունաստան (№ 80, էջ 21):
Այս անունները նորից ապացուցում են, որ հեղինակը քաջ ծանոթ է
Թյուրքիայի և, մասնավորապես, Թյուրքահայաստանի միջավայրին: Հիշա-
տակության արժանի է նաև այն փաստը, որ հեղինակը հիշում է Պարսկաս-
տանը (№ 80, էջ 21), Եփրատի ջուրը (№ 86, էջ 97), Եդեսիան, Մեսսին
(№ 79, էջ 90) և այլն:

Տեղեկ-դիբ

Աշուղ-բանաստեղծը իրագրել է պատմության փաստերին: Այդ մասին վկայում են բիրիլական առասպելական և պատմական անձնավորությունների անունները, որոնք հանդիպում են այս ձեռագրատետրում, «Սուրբ Ղազարոս», «Գույր Մարթա», («Փեսային», № 66, էջ 83), Աղամ (№ 74 էջ 87), «Հովսեփ», «Սահակ», «Լուստեր», «Խաղի», «Խորենացի» (№ 76, էջ 88), «Մեծն Արդար Արշամյան», «Հիսուս», «Թաթեոս», «Սուրբ Բարտոլոմեոս», «Սանատրուկ», «Տրդատ», «Գրիգոր Երզնկա», «Մեսեղացի Ներսեսներ» (№ 79, էջ 90), «Մարկոս Օղլի Ալի», «Սամբսոն», «Իսրայել», «Սուրբ Աբրահամ» (№ 80, էջ 92), «Պետրոս», «Մաղքոս» (№ 84, էջ 96), «Ղեկնդ», «Հովսեփ» (№ 83, էջ 97), «Լանկ-Թեմուր», «Սուրբ Կարապետ» (№ 88, էջ 99), «Սուրբ Նարեկացի» (№ 101, էջ 105) և այլն:

Հատուկ ջերմությամբ նա հիշում է հայ մատենագիրներին.

Մեր երջանիկ Հովսեփ, Սահակ երբեք Լուստեր չի լինիլ.

Խաղի Գյուլտի քարոզները բնավ սուտել չի լինիլ,

Խորենացվո պատմությունը կետը սուտել չի լինիլ.

Զվստահենք անգլիացուն, չի լինիլ մեզի սատար:

Զմոռնանք մեր երջանիկ Թարգմանչաց հայ տառերեն,

Անարգելով նուշն ու դեղձը՝ սիրենք անպետ ծառերեն.

Հարդենք աչքն ու եկեղեցին, համբույր տանք սուրբ քարերին.

Թողին ավանդ մեր նախնիքը...

Բանաստեղծն ունի գեղեցիկ սիրային երգերի նմուշներ, որոնք են. «Գրեցի» (№ 67, էջ 84), «Տուպեյիթ» (№ 72, էջ 86), «Մրմունջ վարդի» (№ 76, էջ 88), «Գանգատ» (№ 78, էջ 89), «Սիրահար» (№ 90, էջ 100), «Գթա» (№ 95, էջ 102), «...» (№ 96, էջ 102), «Ն-ին» (№ 98, էջ 103), «Խաղ» (№ 99, էջ 104), «Զէ՛ արդյոք» (№ 103, էջ 107), «Սիրական» (№ 104, էջ 107), «Սիրելի» (№ 105, էջ 108), «Ասել են» (№ 106, էջ 108) և այլն:

• • •

Ինային ներկայանում է մեզ որպես աշուղ-բանաստեղծի մի հետաքրքրական դեմք, իսկ նրա պոեզիան՝ բազմիսկան շրջանի ժողովրդական տրամադրությունների, զգացմունքների անմիջական արտահայտության մի ուշագրավ երևույթ:

Ստորև բերում ենք բանաստեղծի երգերից 6 նմուշ՝ «Ո՛ւմ պետքն է», «Լանկ-Թեմուրն ի Մուշ», «Ծիլոյներն ի Պայազետ», «Տուպեյիթ», «Գանգատ» և «...»:

Ո՛ՒՄ ՊԵՏՔՆ Է

Օտարի դուռը ման գալով՝ հաց եմ ասում, ռւմ պետքն է.

Բոլոր դոներին զարնելով՝ բաց եմ ասում, ռւմ պետքն է.

Ծարավ, քաղցած, մերկ ու բոբիկ շատ երկրներ ման գալով,

Անողորմ մարդոց դռները լաց եմ ասում, ռւմ պետքն է:

Քննելով շաաբուս սիրտը վրաս փորձեցին սուրը,

Պապական ընկել եմ գետին, զլանա մին պագ ջուրը.

Ու մինչև երբ ինձի վառի ատելության լափող հուրը.
Այս հոգևարք վիճակումս կաց են ասում, ում պետքն է:
Մի խրոխտար, ով Ինայի, չի մնալ այդ քսակդ.
Բաց է դեմդ թշվառության կորստական լճակդ.
Ե՞տ զլիկցդ էլ կփախցնեն ունեցած հին գտակդ.
Նրանից վերջը քեզ համար կաց են ասում, ում պետքն է:

ԼԱՆԿ-ԹԵՄՈՒՐՆ Ի ՄՈՒՇ

Անունտի մնա Լանկ-Թեմուր,
Խեղտի բերիք խաչյալ ու թուր,
Խատուցիր դու մըր խաց ու ջուր:
Վայանիծուկ, վայ Լանկ-Թեմուր, | ամեն տան վերջում
Դո սուրաթնի թող ծածկա մուր: | կրկնվում է:
Մընք դժր գնանք մըղի հավար,
Թալան արեց մալ ու տավար.
Ի՞մալ զանենք ցորեն, ձավար:
Օլուղ-չրուղ խեղճ ու տկլոր
Մընք դժր տանենք զըմմեն բոլոր,
Խաղար անգամ եկավ էա գոր:
Մանեմ քըզի սուրբ Կարապետ.
Ի՞նչ պախպանիս մըր գառ ու ճետ.
Չգայր մըզի մըր ճժու խետ.
Չունենք ախպեր, նը պապ, նը մամ,
Նը խնամի, նը բարեկամ.
Չըմ գինա իս, թե դոր երթամ:
Ա՛խ, կարավան, դու գճր անցար,
Մըր խալին չին ի գա հավար.
Աճման խասավ մըր մալն հավար:
Մոսոն կիլա ու խաց կուղա,
Խաց չկա, սիրտս կու վաղա.
Մշու տաշտը տարան տաղա:
Իոսոն գնաց քիսավ դարիպ,
Թըղ ի գա մըր լոխման թապիպ.
Սուրբ Կարապետն ա մեկ խատիկ:
Հանպըտանք էս իըման օրին,
Չընք դիմանար աճմա չոռին.
Տեսեք կիլա Մշու ձորին:
Իըման աստված էզնիս պառեկ,
Ստեղծել էս զրգուռ սաբեկ.
Մըր ճամբեն ա մըկա չարեկ:

ՃԻԼՈՅՆԵՐՆ Ի ՊԱՅԱՋԵՏ

Օսմանյան օգնութիւն... ճիւղներ հասան.
Բարբարոս քրդական... միջոց անսահման.
Պայազետի ձայներն... երկինք բարձրացան:

Տեսնե՛ք հայ աղջկան... լողա մեջ արյան. } ամեն տան վերջում
Չկա[ն] հայ մանուկներ... ի դուր զոհվեցան: } կրկնվում է:

Անգութ են ճիւղներ... փորձելով նիզակ.
Մայրերը կփնտրեն... յուր որդին միակ.
Արտերի ակոսը... լիցուցավ դիակ:

Երկնքեն չկտրի... անձրեն ու ցողը,
Պատուած են ահա... հարսնության քողը.
Պահեցեք սերմերը... չտանի դողը:

Զնաց տաճարը... սրբութիւն սրբոց,
Լցվեցավ Պայազետ... սուր ավար ու բոց,
Բարձրացավ մինչ երկինք... ազադակ ու բոց:

Մայրերու դրկերեն... որդին փախուցին.
Պառաջն ու ծերունին... սրով փախցուցին.
Ջարդերու լուրերը... հրին հասցուցին:

Ծնողքը կփնտրեն... իրենց դավակներ.
Խորտակվել են սաստիկ... սիրո նավակներ.
Չկան սուրհանդակներ... և ոչ նավակներ:

Նկատեք աղջկան... պարկեշտությանը.
Ափսոս զոհ եղել է... ճիւղյան տանը.
Ավաղ հայ տղային... ի դուր մահվանը:

Անմեղը զոհվելով... սլացավ երկինք.
Բողոքներ կկարդա... թե բավ է լլկինք.
Դանի մեկ, քանի մեկ... չարչարվինք, էլվինք:

Խնդրեցեք երկնքեն... եղեմյան հանգիստ.
Հերիք է չարչարվինք... անիրավ ու միշտ.
Արյունով անցուցին... ծարա՞նները խիստ:

Ջարդարանք, պաճուճանք... թողեք աշխարհին.
Հույս գրեք ու գործեք... ի սեր անճառին.
Դուցե նա այցելե... աղքատ անկարին:

«ՏՈՒՊԵՑԻԹ»

Արի, սիրուն, ուրախացուր,
Սիրտս վաղուց է գալարած,
Տեսնեի ծիծաղ պատկերդ,
Սիրտդ ինչով է զարդարված:

Քո ոտի տակի հողս եմ ես,
 Կարոտության քողն եմ ես,
 Տեսությանդ զողն եմ ես,
 Ցույց տուր գեմքդ լայնատարած:

Տեսնեի դեմքդ սիրելի
 Թշնամաց դեմ անպարտելի.
 Բժիշկներին ես հարցրի.
 Դու ես իմ դեղս հարմարած:

Քեզն Ինային քո դրանտ
 Գութ է խնդրում զանձարանետ,
 Ով չի վախում դատաստանետ.
 Նա է սրտով հաղթահարած:

«ԳԱՆԳԱՏ»

Սրտիցս չի վերջանալ անմարելի սիրո բոցը,
 Մինչև երկինք սյուն է կանգնել հառաչանքը և կոծը.
 Պարզ էր սերդ, որ սիրեցի, բաժինս եղավ հնոցը:
 Օ՛հ, արարիչ, ուր է գնում, իմ սրտիս խորունկ խոցը
 Քնդրում եմ միշտ արարչիցս, չթարշամի քո գեղը.
 Թե կամեցար սիրել սրտով, ստախոս էր քո ցեղը.
 Բաժանվեցար զու ինձանից, դժոխք լինի քո տեղը:
 Օ՛հ, արարիչ, ուր է գնում, իմ սրտիս խորունկ խոցը
 Քեզն Ինայիս աղաչեցի, չնայեցիր երեսիս.
 Ո՛չ կամեցար ինձի սիրել, ոչ հարադատ ընկերիս.
 Զխեցիր իմ խորհուրդը, անիծել եմ կերերիս:
 Օ՛հ, արարիչ, ուր է գնում, իմ սրտիս խորունկ խոցը

* * *

Պատահեցի սիրունների երամին.
 Ոչ ոք չկար ընտիր սիրելուս նման.
 Ինչպես սիրեմ վայրի անպետ գերանին,
 Որ չունի ողկույղ ճիւղ սիրելուս նման:
 Այն պատկերը սուրբ էր, տեսածս սուտ էր.
 Նրանք հաստատուն, սրանք փուտ էր.
 Հացին չէր ախորժիլ, բանջար շատ կուտեր.
 Եվ չէր առույգ ու ժիր սիրելուս նման:
 Ինայի ինձ լսես՝ խոսքիտ կապ գնես.
 Սիրունների համար գրչիս չափ դնես.
 Ակոսիտ անունը ազարակ գնես.
 Եթե ոչ գու լոիր սիրելուս նման:

Ананда Харатян

Еще о забытом поэте Хачатуре Эхрамчянце

Резюме

Проф. Л. Меликсет-Бек в 1940 году в „Известиях Арм. Филиала Академии Наук СССР“ (№ 4—5, стр 73—80) поместил сообщение о первой части рукописного сборника армянского ашуга-поэта Хачатура Эхрамчянца (Ашуг-Инаи), издание которого было запрещено царской цензурой. Недавно в архиве б. Кавказского Цензурного Комитета обнаружена вторая часть вышеупомянутого рукописного сборника, являющаяся непосредственным продолжением первой части и также не допущенная к изданию.

Вторая часть сборника песен Хачатура Эхрамчянца носит заглавие: „Продолжение Карени сригин“ (пд-армянски). В нее входят 54 песни, из коих цензором полностью вычеркнуты 10, а частично одна.

Автор рукописи представляется нам как интересная личность ашуга-поэта, а его поэзия—как непосредственное выражение настроений армянского народа времени Раффи.

Ашуг-поэт в своих песнях хочет видеть свою родину, как там выражается, „просвещенной“, „свободной“ и призывает служить ей и ее прогрессу.

Но армянский народ, постоянно подвергаясь насилию, угнетению со стороны восточных варваров, вынужден эмигрировать. Это глубоко трогает поэта, поэтому он с волнением вспоминает нашествие Тамерлаца, затем чудовищную по своей жестокости резню армян турками.

Народ, эмигрируя, попадает в негостеприимную среду. В новой стране, как и в пресловутых католических и протестантских „Миссионерах“, он не находит „правды“ и оплакивает трагическое положение своего народа.

Одновременно он с злым сарказмом высмеивает армян-богачей, которые скупы даже по отношению к своей родине.

Автор, выходец из Карина (Эрзерум), в своих песнях, полных автобиографических данных, подчеркивает, что он представитель народа-труженика и ему некогда воспевать цветы, что он претерпел много лишений и неудач, что его мечты полностью не осуществились. Но ему некому жаловаться, т. к. царское самодержавие „связало“ его „свободный язык“.

Ашуг-Инаи владеет литературным языком, является образованным человеком своего времени. Об этом свидетельствуют его песни, изобилующие именами исторических и библейско-мифологических лиц, знаменательными фактами истории. Кроме того, одна песнь— „Ланк-Темур в Муше“, написанная на мушском диалекте, представляет собою ценный материал для армянской диалектологии.